Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

03.07.2018թ
ժամը 18:00

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սարգսյանց

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարտիրոսյան
Կ. Երիցյան
Ա. Քոչարյան
Վ. Առաքելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգին *ներկայացված հայտերի բացման մասին*

(Ա. Սարգսյանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի հունիսի 22-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 932 017 733 (ինը հարյուր երեսուներկու միլիոն տասնյոթ հազար յոթ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Գազկոմշին>> ՍՊԸ	ք. Երևան, Նոր-Նորքի 9-րդ զ-ծ, 20/53	487 000 000	97 400 000	584 400 000
2	<<Սնար>> ՍՊԸ և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ	ք. Երևան, Բրյուսովի փ, 19շենք, բն. 9 ք. Գավառ Անդրանիկի 5	533 225 000	106 645 000	639 870 000
3	<<ՀՈՄ ԲԻԼԴԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ և <<ԷԴՈՒԱՐԴ-ՇԻՆ>> ՍՊԸ	ք.Երևան,Դավիթաշեն 4-րդ թաղ., շ.51/3, հ.43, ք. Աբովյան, 2-րդ մ/շրջ. 28/11	534 000 000	106 800 000	640 800 000
4	<<Բիդեք>> ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նեկրասովի 86	575 000 000	115 000 000	690 000 000
5	<<ԵՐԱՆՈՍՇԻՆ>> ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հատիսի 1/96	582 500 000	116 500 000	699 000 000
6	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26	598 916 600	119 783 320	718 699 920

7	<<Արարատշին>> ՍՊԸ	ք. Արարատ, Խանջյան 12	620 833 333	124 166 667	745 000 000
8	<<Երևանշին>> ՍՊԸ և <<Ավետիսյան Քոնսթրաքշն>> ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի 74/2	691 246 657.5	138 249 331.5	829 495 989.0
9	<<Անդրեաս և ընկերներ >> ՓԲԸ	Շիրակի մարզ ք. Գյումրի Լ. Մադոյան 287	708 333 330	141 666 666	849 999 996

դ) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 22.06.2018թ. հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ե) Գնման ընթացակարգի մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Երևանշին>> և <<Ավետիսյան Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ների կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) կողմից մրցութային փաստաթղթերը էլեկտրոնային գնումների armeps համակարգ մուտքագրվել են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, բայց սկանավորված տեսքով, որի պատճառով հնարավոր չէ պարզել մրցութային փաստաթղթերի վրա էլեկտրոնային ստորագրությունների առկայությունը և վավերականությունը:

Կոնսորցիումի էլեկտրոնային ստորագրությունների առկա և վավեր լինելու հանգամանքը պարզելու համար գհանատող հանձնաժողովը 27.06.2018թ. ժամը 11:30 նիստի արդյունքում որոշել է համապատասխան գրությամբ դիմել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրեր տրամադրող և էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված ծառայություններ մատուցող ՀՀ-ում միակ հավատարմագրված հավաստագրման կենտրոն հանդիսացող <<Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ>>ՓԲԸ-ին (<<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ) և կասեցնել նիստը մինչև պարզաբանում ստանալը:

Վերջինիս 29.06.2018թ. N 146 գրության համաձայն՝ կոնսորցիումի կողմից մուտքագրված փաստաթղթերը սկանավորված տեսքով են, որի պատճառով հնարավոր չէ պարզել էլեկտրոնային ստորագրությունների առկայությունը և վավերականությունը, իսկ ստորագրող անձանց էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը ակտիվ են և նրանք իրավասու են ստորագրել էլեկտրոնային փաստաթղթեր:

Էլեկտրոնային ստորագրությունների առկա և վավեր լինելու հանգամանքը պարզելու համար գնահատող հանձնաժողովը 02.07.2018թ. ժամը 17:00 նիստի արդյունքում որոշել է Կոնսորցիումին ծանուցել ներկայացնելու երկկողմանի ստորագրված տեղեկանք առ այն, որ <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգին Կոնսորցիումի կողմից ներկայացված մրցութային փաստաթղթերը հաստատված են այդ կազմակերպությունների տնօրենների կողմից: Անհրաժեշտ է նաև պահանջվող տեղեկանքը հաստատել Կոնսորցիումի տնօրենների էլեկտրոնային թվային ստորագրություններով (որոնք ակտիվ կլինեն ստորագրված ֆայլում և կպարունակեն հասանելի ամբողջական տեղեկատվություն դրված ստորագրությունների մասին) և էլեկտրոնային թվային ստորագրություններով հաստատված բնօրինակ տարբերակով ներկայացնել գնահատող հանձնաժողովին (այլ ոչ թե սկանավորված տեսքով):

Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ հավելված 2.1-ում նշված չեն կազմակերպությունների իրական շահառուների անձը հաստատող փաստաթղթերի տեսակները (համաձայն աղյուսակով սահմանված պահանջի):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը 02.07.2018թ. ժամը 17:00 նիստի արդյունքում որոշել է ծանուցել Կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները (հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի)

և հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո, բայց ոչ ուշ, քան 04.07.2018թ. ժամը 11:00-ին:

Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Սարգսյանց)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Գազկոմշին>> ՍՊԸ	բավարար
2	<<Սնար>> ՍՊԸ և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ	բավարար
3	<<<ՀՈՄ ԲԻԼԴԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ և <<ԷԴՈՒԱՐԴ-ՇԻՆ>> ՍՊԸ	բավարար
4	<<Բիդեք>> ՍՊԸ	բավարար
5	<<ԵՐԱՆՈՍՇԻՆ>> ՍՊԸ	բավարար
6	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	բավարար
7	<<Արարատշին>> ՍՊԸ	բավարար
8	<<Երևանշին>> ՍՊԸ և <<Ավետիսյան Քոնսթրաքշն>> ՍՊԸ	բավարար
9	<<Անդրեաս և ընկերներ >> ՓԲԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Սարգսյանց)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

1) ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը,

2) էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Սարգսյանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա.Սարգսյանց

Անդամ՝ ---------- Ն.Մարտիրոսյան

---------- Կ.Երիցյան

---------- Ա.Քոչարյան

---------- Վ.Առաքելյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան